

# ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

## COVID-19-Ը ԵՎ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ. ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ



### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կառավարության՝ սույն թվականի մարտի 16-ի որոշմամբ մինչև սույն թվականի ապրիլի 14-ը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում սահմանվել է արտակարգ դրություն՝ կապված նոր Covid-19 վարակի աննախադեպ տարածման հետ: Մինչույն ժամանակ՝ վարակի հետագա տարածումը մեղմելու նպատակով բազմաթիվ հաստատություններ անցել են աշխատանքի հեռահար ռեժիմի, իսկ զանգվածային միջոցառումների անցկացման համար սահմանվել են մի շարք սահմանփակումներ:

**Բաժնետիրական ընկերությունները պետք է անցկացնեն տարեկան ժողովներ: COVID-19 համաճարակի պայմաններում կարո՞ղ են արդյոք այդ ժողովները անցակցվել հեռակա քվեարկության կարգով: Ի՞նչ կարգավորումներ կան ու ի՞նչ կարելի է անել: Ի՞նչ է պետք փոխել հնարավոր իրավական ռիսկերը կանխելու համար:**

## Բաժնետերերի հեռահար ժողովներ

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ֆինանսական տարվա ավարտից հետո ոչ ուշ, քան վեց ամսվա ընթացքում ընկերությունները պարտավոր են գումարել տարեկան ընդհանուր ժողով:

Հաշվի առնելով, որ արդեն ավարտին է մոտենում մարտ ամիսը, և նկատի ունենալով Covid-19-ի հետագա տարածման և հասարակական կյանքի բոլոր բնագավառների վրա բացասական ազդեցության վերաբերյալ կանխատեսումները՝ պարզ է դառնում, որ տարեկան ժողովները պետք է անցկացվեն նշված բարդ և վտանգավոր ճգնաժամային ժամանակաշրջանում: Այդ կապակցությամբ հարց է առաջանում՝ արդյոք օրենսդրությունը թույլ է տալիս տարեկան ժողովներն անցկացնել հեռահար կարգով ու ինչ կարգավորումներ ունի հայկական օրենսդրությունը հեռակա քվեարկության վերաբերյալ:

### Գործող կարգավորումները

#### Հեռակա քվեարկություն



Չնայած գործող օրենսդրությունը թույլ է տալիս հեռակա քվեարկության միջոցով ընդհանուր ժողովի որոշումների ընդունումը, այնուամենայնիվ, դա չի վերաբերում տարեկան ժողովներին: Մասնավորապես, տարեկան ժողովում հեռակա կարգով քվեարկելու իրավունք ունեն բացառապես բաժնետոմսերի անվանատերերը՝ այն դեպքում, երբ այդպիսիք կան բաժնետերերի (անվանատերերի) ցուցակում: Ավելին,

հեռակա կարգով քվեարկություն չի թույլատրվում նաև այն պարագայում, երբ տարեկան ժողով տեղի չունենալու դեպքում տարեկան ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերի<sup>1</sup> վերաբերյալ որոշումներն ընդունվում են արտահերթ ժողովում:<sup>2</sup>

<sup>1</sup> Այդպիսիք են ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը:

<sup>2</sup> Տես «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածը:

Վերոնշյալի կապակցությամբ պետք է շեշտել, որ ներկա կարգավորման պարագայում էլ մի շարք ընկերություններ ունեն իրական ժամանակում առցանց ժողովների և հեռակա քվեարկության կազմակերպման ընթացակարգեր, հատկապես երբ բաժնետերերի քանակը փոքր է:<sup>3</sup> Այնուամենայնիվ, օրենսդրական կարգավորման վերը նշված թերություններն ամեն դեպքում պարունակում են ռիսկեր այդպիսի ընթացակարգեր մշակած ընկերությունների համար: Մասնավորապես, էլեկտրոնային քվեաթերթիկների օրենսդրական կարգավորման բացակայության պայմաններում հատկապես շատ բաժնետերեր ունեցող ընկերություններում առցանց քվեարկության կազմակերպումը, մասնավորապես՝ մասնակիցների ձայները հաշվելը, դառնում է բավականին բարդ:<sup>4</sup>

Ավելին, օրենքի նշված իմպերատիվ կարգավորումների պարագայում առկա է ռիսկ, որ այդպիսի քվեարկությամբ ընդունված որոշումները շահագրգիռ անձանց (օր.՝ բաժնետերերի) կողմից բողոքարկվելու պարագայում կարող են ճանաչվել անվավեր: Մինևույն ժամանակ, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ի տարբերություն վերոնշյալ կարգավորումների՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների վերաբերյալ օրենսդրությունն այս առումով ավելի ճկուն է. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը հեռակա քվեարկության որևէ սահմանափակում չի նախատեսում:<sup>5</sup> Ավելին, սահմանվում են հեռակա քվեարկության ձևեր: Մասնավորապես, նման քվեարկություն կարող է անցկացվել փաստաթղթերը փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կամ փոխանցվող և ընդունվող հաղորդագրությունների իսկությունը և դրանց փաստաթղթային հաստատումն ապահովող կապի այլ միջոցներով փոխանակելու միջոցով:<sup>6</sup>



### Ծանուցումներ

Պանդեմիայով պայմանավորված՝ սոցիալական շփումների սահմանափակման համատեքստում մտահոգությունների տեղիք են տալիս նաև տարեկան ժողովի

<sup>3</sup> Այդպիսի ընթացակարգերն որպես կանոն սահմանվում են կանոնադրությամբ:

<sup>4</sup> Օրինակ՝ եթե 2-5 բաժնետերեր ունեցող ընկերություններում հնարավոր է քվեարկությունը կազմակերպել տեսակապի միջոցով և արագ ու առանց խնդիրների հաշվել ձայները, ապա մի քանի տասնյակ և ավելի բաժնետերեր ունեցող ընկերությունների համար դա չափազանց դժվար կարող է լինել:

<sup>5</sup> Տես «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածը:

<sup>6</sup> Նմանատիպ կարգավորում կա նաև «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքում: Տես նշված օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասը:

Ծանուցման կարգի վերաբերյալ գործող կարգավորումները: Մասնավորապես, ընկերության կանոնադրությամբ ծանուցման այլ ձև նախատեսված չլինելու դեպքում բաժնետերերի ծանուցումը և քվեաթերթիկների տրամադրումն իրականացվում է պատվիրված նամակ ուղարկելու կամ առձեռն հանձնելու միջոցով:<sup>7</sup>

Այսինքն, վերոնշյալ՝ վարակի պայմաններում բախվում ենք մի իրավիճակի, որում այն դեպքերում, երբ ընկերության կանոնադրությամբ նախատեսված չէ ծանուցման էլեկտրոնային ձև, այդպիսի ծանուցումը պետք է պարտադիր իրականացվի թղթային փաստաթղթեր հանձնելով: Ստացվում է, որ ոչ միայն տարեկան ժողովի անցկացման սահմանված կարգն է պարունակում վարակի հետագա տարածման բազմաթիվ ռիսկեր, այլև ծանուցման կարգը:

### Ի՞նչ անել

Ներկա պահին՝ երբ Covid-19-ի դեպքեր են գրանցվել աշխարհի 187 երկրներում,<sup>8</sup> դրա հետ կապված համակարգային ռիսկերի կառավարմանն ուղղված քայլերի ձեռնարկումը դարձել է ոչ միայն տնտեսական, այլև բարոյական հրամայական՝ այդ թվում նաև կազմակերպությունների սոցիալական պատասխանատվության համատեքստում:



Այսպիսի իրավիճակում աշխարհի բազմաթիվ երկրներում վերանայվում են կորպորատիվ կառավարման «ավանդական» սկզբունքները և գործիքները: Օրինակ՝ Շվեյցարիայում օրենսդրական մակարդակով արգելվել է մինչև ապրիլի 19-ը անցկացնել բաժնետերերի «ֆիզիկական» ժողովներ, և թույլատրվել է հեռակա քվեարկության կարգով տարեկան ժողովների անցկացումը:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա, ինչպես նշվել է վերևում, ՀՀ օրենսդրությունն արգելում է տարեկան ժողովների անցկացումը հեռակա քվեարկության կարգով, ինչը նշանակում է, որ Covid-19-ի հետագա տարածման կանխման նպատակով տարեկան ժողովներում հեռակա քվեարկության, ինչպես նաև տարեկան ժողովների վերաբերյալ էլեկտրոնային ծանուցման անցնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է, որ համապատասխան փոփոխություններ կատարվեն «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում: Եվ չնայած այն հանգամանքին, որ այս ակնարկում շեշտադրվում է հեռակա քվեարկության ներդրման անհրաժեշտությունը Covid-19-ի հետ կապված բացասական երևույթները կանխելու

<sup>7</sup> Տես «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասը:

<sup>8</sup> Անընդհատ թարմացվող վիճակագրական տվյալները հասանելի են հետևյալ հղումով՝ <https://www.worldometers.info/coronavirus/>:

համատեքստում, մենք վստահ ենք, որ այդպիսի մեխանիզմների ներդրումը դրական հետևանքներ կունենա նաև մի շարք այլ հարթություններում, օրինակ՝ կապահովի ռեսուրսների էական խնայություն:

Միննույն ժամանակ, սույն ակնարկում ներկայացված ռիսկերի հաղթահարման առումով կարևոր է, որ օրենսդրական փոփոխությունները բավարարեն մի շարք չափանիշների, մասնավորապես.

- փոփոխությունների ուժով պետք է ժողովի կազմակերպչին իրավունք տրվի հրավիրելու առցանց ժողով և կազմակերպելու էլեկտրոնային քվեարկություն նույնիսկ այն դեպքում, երբ կանոնադրությամբ նման հնարավորություն նախատեսված չէ,
- պատշաճ քվեարկություն ապահովելու նպատակով ժողովի կազմակերպիչը պետք է մշակի էլեկտրոնային քվեաթերթիկներ, որոնք հնարավորություն կընձեռեն ապահովելու ժողովի օրակարգում ընդգրկված բոլոր հարցերի առնչությամբ պատշաճ քվեարկությունը,
- փոփոխությունների ուժով ժողովի մասին ծանուցումն ու փաստաթղթերի հանձնումը ևս պետք է հնարավոր լինի իրականացնել էլեկտրոնային եղանակով:

**Ծանուցում. Այստեղ ներկայացված մտքերը չեն հանդիսանում իրավաբանական խորհրդատվություն**

**ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՔՅԱՆ**

Կառավարող գործընկեր  
[vavedikian@tk.partners](mailto:vavedikian@tk.partners)



**ԼԱՐԻՍԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Կրտսեր իրավախորհրդատու  
[lgevorgyan@tk.partners](mailto:lgevorgyan@tk.partners)

